

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՍՆՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՐՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սլովենիայի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող Կողմեր),
ձգտելով զարգացնել և ամրապնդել երկու պետությունների միջև բարյացակամ հարաբերությունները, ինչպես նաև ընդլայնել համագործակցությունը կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում,
ընդունելով Եվրոպայի Անվտանգությանը և Համագործակցությանը նվիրված Հելսինկյան եզրափակիչ որոշման համաժողովի սկզբունքները, Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիան և Եվրոպայի խորհրդի Վիեննայի հռչակագիրը,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, հավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա, կաջակցեն և կխրախուսեն փոխանակումները և համագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, արվեստի, սպորտի և երիտասարդության բնագավառներում:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը կրթության բնագավառում.
2.1 համալսարանների և այլ կրթական հաստատությունների անմիջական համագործակցության և շփումների հաստատմանը,
2.2 շահագրգիռ հաստատությունների անմիջական համագործակցության հիման վրա ուսանողների, դասախոսների, գիտնականների և փորձագետների փոխանակմանը,
2.3 մյուս երկրի լեզվի, գրականության, մշակույթի և պատմության ուսումնասիրության նպաստմանը:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը մշակույթի և արվեստի բնագավառում.
3.1 աջակցելով ցուցահանդեսների և այլ մշակութային իրադարձությունների կազմակերպմանը,
3.2 աջակցելով գեղարվեստական և գրական ստեղծագործությունների թարգմանություններին և իրապարակումներին, գրողների, նկարիչների, երաժիշտների և այլ մշակութային գործիչների փոխադարձ այցերի կազմակերպմանը՝ օժանդակություն ցուցաբերելով նրանց գործունեության ծավալմանը,
3.3 փոխանցելով Կիևի նախաձեռնության կյուբյանյան գործընթացի փորձի մշակութային ժառանգության վերականգնմանը և նպաստելով Պայմանավորվող կողմերի միջմշակութային երկխոսությանը,
3.4 Պայմանավորվող կողմերի միջև համաձայնեցված համագործակցության այլ ձևերի միջոցով:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կաջակցեն ինչպես շարժական, այնպես էլ անշարժ մշակութային ժառանգության ոլորտի՝ հաստատությունների համագործակցությանը
Պայմանավորվող կողմերը նաև կփոխանակեն տեղեկություններ արվեստի ստեղծագործությունների արտահանման, ինչպես նաև ապօրինի փոխադրումների կանխարգելման հարցում:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում, կնպաստեն ռադիո և հեռուստատեսային ծրագրերի փոխանակմանը:
Պայմանավորվող կողմերը կնպաստեն նաև երկու պետությունների մամլո գործակալությունների համագործակցությանը:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը սպորտի բնագավառում, ինչպես նաև երկու պետությունների երիտասարդ կազմակերպությունների համագործակցությանը:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը կաջակցեն վերոնշյալ բնագավառում երկու պետությունների կառավարական և ոչ կառավարական հաստատությունների միջև անմիջական համագործակցությանը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը կաջակցեն գիտական և տեխնոլոգիական բնագավառում անմիջական համագործակցությանը՝ հավասարության և փոխադարձ համագործակցության սկզբունքով: Գիտական և տեխնոլոգիական համագործակցության իրականացման հետ կապված պարտավորությունները կհամաձայնեցվեն

առանձին պարբերական ծրագրերի միջոցով:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերից մեկի նախաձեռնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կծեկերպվեն առանձին Արձանագրությամբ, ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի համաձայն և կհանդիսանան դրա անբաժանելի մասը:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Այն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումն ստանալու օրվանից:

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ այդպիսի մտադրության մասին մյուս Պայմանավորվող Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու միջոցով: Համաձայնագրի գործողությունը կդադարի նման ծանուցում ստանալուց վեց ամիս հետո:

Սույն Համաձայնագրի դադարեցումը չի ազդի այն ծրագրերի իրագործման վրա, որոնք չեն ավարտվել մինչև Համաձայնագրի դադարեցումը:

Կատարված է Երևանում, 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, սլովեներեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2012 թ. փետրվարի 28-ին